Վրացիները հակառակում էին, որ Վրաստանի հայ հին բնակիչները դառնան հայահպատակ: Նոյն խորհրդաժողովում նորից քննուեց և չլուծուեց սահմանների խնդիրը. այս անգամ վրացիները պահանջում էին Լոռին մինչև Սանահին, ամբողջ Ախալքալաքի դաւառը, Արդահան և Օլթի դաւառների որոշ մասերը: Հայաստանի և Վրաստանի միջև կնքուեց դատական համաձայնութիւն և 1919 թւի թրանզիտի օրէնքը լրացուեց բացատրութեամբ, որով ռազմանիւթն էլ փոխադրուելու էր սովորական ապրանքների պայմանով: Մինչև այդ վրացիները արգելքներ էին յարուցանում և, օրինակ, Հայաստանի համար Ղրիմից «Ֆենիկս» նաւով եկած 3 միլիոն փամփուշտը բաց թողին միայն 30%ը ստանալուց յետոյ:

Օգոստ. 2 Խորհրդարանի նիստում Հայաստանի ներքին չինարար աշխատանքը նիւթ դարձաւ վարչապետի ընդարձակ զեկուցման: Այդ նիստում, Սոց.–Յեղափ. Կուսակցութեան Հայաստանի կազմակերպութիւնը յայտարարեց, որ ինքն այլևս ճանաչում է Հայաստանի անկախութիւնը: Պատգամաւոր Ա. Խոնդկարեանը արաւ հետևեալ յայտարարութիւնը.

«Մեր պատգամաւորութիւնը Եւրոպայում միշտ խօսում էր եւրոպական պետութիւնների մանդատի մասին, իսկ այսօր քաղաքական պայմաններն այնպէս են դասաւորուած, որ ժամանակ է յայտարարել, թէ մեր պետութիւնը պիտի ապրի ինքն իր ուժով: Այսօր, սակայն, ռուսական օրիէնտացիան նոյնպէս գործնական օգուտ չի տալիս մեր պետութեան՝ թէ Անդրկովկասում ստեղծուած դրութեամբ և թէ իր ներկայ իդէոլոգիայով: Եւ ես պարտք ունեմ յայտնելու այստեղ սոցիալիստ–յեղափոխական ֆրակցիայի կողմից, որ մենք եկած ենք այն համոզման, որ Անդրկովկասի դեմոկրատիան պիտի ապրի ինքն իրեն անկախ: Իւրաքանչիւր ոյժ, որ դէմ կը գնայ այդ շահերին, կը դիտուի նոյնպէս թշնամի, և մենք դէմ պիտի գնանք նրան»:

Զգոյշ ու վարանոտ՝ հայ սոցիալիստ–յեղափոխականներն ևս գալիս էին կանգնելու Հայաստանի անկախութեան տեսակէտի վրա, և Խորհրդարանը բուռն ծափերով ու բացականչութիւններով ողջունեց նրանց այդ քայլը: Այսպիսով, այսուհետև Հայաստանի բոլոր քաղաքական հոսանքները, բացի բոլշևիկներից, կողմնակից էին անկախութեան:

Հայաստանի բնակիչներից ոչ պակաս խանդավառ Հայաստանի անկախութեամբ ոգևորուում էին և Հայաստանից դուրս գտնուող հայերը, որնցից շատերը բուռն կերպով ձգտում էին տեղափոխուել Հայաստան: Կառավարութիւնը անհաշիւ համախոսականներ ու դիմումներ էր ստանում, պատգամաւորութիւններ ընդունում՝ Թուրքեստանից, Հիւսիսային Կովկասից, Դոնի շրջանից, Մոսկուայից, Սև ծովի եզերքներից, Բալկաններից, Միջագետքից, Պարսկաստանից, անգամ Արժանթինից, որոնք խնդրում էին փութացնել ներգաղթը: Շատերը արտօնութեան էլ չէին սպասում. վերջացնում էին իրենց գործերը, ծախում–ծախծխում ունեցածը և շտապում Հայաստան: Շատերին յաջողուեց հասնել, ոմանք մնացին ճանապարհին, շատ շատերն էլ իրենց տեղերում, մեկնելու պատրաստ վիճակի մէջ: Երևանը հետզհետէ դառնում էր համահայկական քաղաք: Մի ճամբորդ